

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԺԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Զուգադրվում են և վերլուծվում հայերենի, ռուսերենի և անգլերենի ցանկություն և դժկամություն իմաստներն արտահայտող դարձվածքները: Դարձվածքների ուսումնասիրությունը բացահայտում է ընդհանրություններ և տարբերություններ ուսումնասիրվող լեզուների դարձվածքների իմաստային և այլ առանձնահատկությունների միջև, ինչը վկայում է տվյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների մասին:

Առանցքային բառեր. դարձվածք, իմաստային դաշտ, առանձնահատկություն, զուգադրում, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն:

Լեզուն մշտապես զարգացող, լեզվական հարափոփոխ երևույթների մի համակարգ է, որում կարող են փոփոխության ենթարկվել թե՛ հնչյուններն ու հնչերանգը, և թե՛ լեզվական տարբեր միավորների ոճն ու իմաստը: Ինչպես նշում է Ս. Ուլմանը «Լեզվում ոչինչ կատարելապես անշարժ չէ: Յուրաքանչյուր բառ, քերականական յուրաքանչյուր տարր, յուրաքանչյուր ոճ, հնչյուն ու հնչերանգ դանդաղ փոփոխվող փախդասավորություն է՝ ձևավորված անտեսանելի և անդեմ մի հոսքով, որը լեզվի կյանքն է» [1, 141]: Հարկ է նշել, որ լեզվում ամենամեծ փոփոխություններին ենթարկվում է իմաստը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել ոչ միայն առանձին բառերի, այլ նաև բառակապակցությունների իմաստները, ընդ որում նշված վերաիմաստավորումը բերում է դարձվածքների՝ ժողովրդի միտքն ավելի պատկերավոր արտահայտող, նրա խոսքն առավել հյութեղ ու կենդանի դարձնող լեզվական միավորների առաջացմանը: Ձեռք բերելով նոր իմաստներ՝ բառերն ու բառակապակցությունները փոխադրվում են իմաստային մեկ այլ դաշտ: Լեզվաբանության մեջ իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջությունն է, և հենց այդ հասկացությունն էլ այդ բառերն ընդգրկում է տվյալ դաշտում [2, 4]: Դարձվածքները կարող են ընդգրկվել հիշյալ դաշտերում ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկությունների:

Սույն հոդվածի նպատակը մարմնի մասերի անվանումներ պարունակող այն դարձվածքների վերլուծությունն ու զուգադրումն է, որոնք արտահայտում են «ցանկություն և դժկամություն» իմաստը հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Ցանկությունը անհատի հոգեկան այն վիճակների կարևորագույն պահերից մեկն է, որը կանխորոշում է նրա վարքն ու գործունեությունը: Այն պայմանավորված է մարդու հոգեկան և ֆիզիկական վիճակներով, ինչպես նաև զգացմունքներով, ապրումներով, մղումներով ու ձգտումներով: Նշված զգացմունքներն էլ իրենց արտացոլումն են գտել որոշ դարձվածքներում: Ներկայացնենք մի քանի դարձվածք ուսումնասիրվող լեզուներում.

Սիրող ուզել – Փափագել, ցանկանալ, ասիրժել: *Ասրված տա՛ էնքան հարստանաս, ինչքան քո սիրտը կուզի [3, 52]: Ինչ որ ասում են, ամեն բան Մոխրոտը կատարում է, բայց սիրտն ուզում է, որ ինքն էլ պար գա [4, 380]:*

Սիրտ մնալ (հաճախ հարցական և ժխտական) – Ցանկանալ, տրամադրություն ունենալ մի բան անելու: *Բայց հիմա, ուղիղն ասած, սիրտ չի մնացել ինձանում [5, 325]:*

Մրտի իղձ / փափագ / ցանկություն – Մի բան անելու, ունենալու ցանկություն: *Ով գիտե, կարող է բախտս բանի, լույսն ու արևը շողան վրես, և ես հասնեմ իմ սրտի փափագին, նպատակին [6, 83]:*

Մեջքը քոր գալ (ծաղր.) – Ծեծվելու ցանկություն ունենալ: *Հալբաթ մեջքը քոր ա գալիս,- ասաց համարձակ երեխան [3, 62]:*

Քիթը քամի մտնել – Որևէ (հաճախ անբնական) բան անելու ցանկություն առաջանալ: *Ինչ քամի է մտել այս մարդի քիթը, գժվել է, տարիներով չի կարող ծախել բերած ապրանքի կեսը [7, 600]:*

Արյան գիժ (խսկց.) – Սպանության ցանկություն ունեցող: *Դա գալիս է, կարծես իրեն չեն ասում, ու արյան գիժ Ստեփանը չի ասում [7, 88]:*

Բերանի (բերնի) ջուրը (ջրերը) / թուքը գնալ / վազել – 1. Համեղ բան ճաշակելիս, տեսնելիս՝ ճաշակելու, ձեռք բերելու մեծ ցանկություն զգալ: *Խորհրդականը էն կողմն է նայում, տեսնում է հիանալի ձուկն ու խորովուն, բերնի ջուրը վազում է [4, 278]:* 2. Սաստիկ փափագել մի բան ունենալ: *Չնայած ազահությունից բերնի ջուրը գնում էր, նա քաղաքավարությամբ արամը վերադարձրեց [7, 123]:*

Գլուխ չունենալ – Անելու ցանկություն չունենալ: *Ես դատարաններ վազվզելու գլուխ չունեմ, և քո ծրագիրն ինձ շատ մութ է թվում [8, 56]:*

Աչք(ը) տնկել / ցցել – Մի բան ցանկանալ ունենալ, ձեռք բերել: – *Քիչ հող ունենք, որ ուրիշների հողին էլ աչք տնկենք, հը,- ավելացրեց Օսմանը [6, 348]:*

Ոչ միայն աշտարակցիք էին աչքը փնկել Խեչանի աղջկա վրա, երկու երեք հարևան գավառների հարուստներն էլ ափամերը սրած՝ միտք էին անում Խեչանի աղջիկն ուզել [3, 79]:

Աչքը վրան լինել – Ցանկանալ մի բան ձեռք բերել: *Գիտես, որ մարդս մարդով ա, գիտես, որ Երևան նստողների աչքն էլ միայի վրա յա* [3, 35]:

Ո՞վ կուզի իր աչքը քոռ տեսնի (խսկց.) – Ո՞վ իր վատը կցանկանա: *Բուլորս էլ պատրաստ եմք, Վաժակ ջան, ով կուզի իրան աչքը քոռ տեսնի* [7, 472]:

Աչք ունենալ - 1. Մի բան ձեռք բերելու ցանկություն ունենալ: *Էն էլ ո՞վ, ե՞ս, ես ուրիշի դատած փողի վրա աչք ունենամ, մահն ավելի լավ չի՞* [3, 116]: 2. Մեկին հավանել, սիրել, ամուսնանալու ցանկություն ունենալ: *Վա՛յ ինձ, վ՛այ իմ հոգուն, փվի ինձ պես փեսեն, որ քենու վրա աչք ունենա* [3, 118]:

Ձեռքերը քոր գալ - Մի բան անելու խիստ ցանկություն զգալ: *Տեսնում եմ ձեռքերդ քոր են գալիս: Չես կարողանում տեղումդ հանգիստ նստել:*

Ականջը ոլորել - Կողմնակիորեն սրտի ցանկությունը հայտնել: *Ես էլ կուզեի ուխտ գնալ, հասկացա, ականջ ես ոլորում, գնա մեր ձին հեծիր* [7, 84]:

Սիրտը փորումը մեռնել (բրբ.) - Երազանքները, ցանկությունները չիրականանալ: *Ու մնաց մեր ջրատար, սիրտը փորումը մեռած Աղասին՝ որ չի գալիս իր մուրազն առնի* [9, 68]:

Երես պահել (մեկից) - Չցանկանալ հանդիպել: *Եվ բոլորը հալածել են նրան, բարեկամը ողջույն չէ փվել և ընկերը երես է պահել նրանից* [10, 158]:

Փորի ցավ - Ցանկություն, փափագ: *Լեզուդ քրզի քաշե, ես գիտեմ քու փորուդ ցավը* [7, 583]:

Մատը վրան դնել - Հավանել, ձեռք բերելու ցանկություն ունենալ: *Ինձ լսի, Մարգար աղա, գոգիդ քարը վեր ածիր, մեր 70 գեղ միայի մեջ ինչ աղջկա վրա մարդ դնես, թե որ չգնամ չուզեմ քեզ համար, ես մարդ չեմ* [3, 14]:

Մատները շփելով – Փող աշխատելու ցանկություն ունենալ: *Աչքով, գլխով նշանացի արեց Սաքոն պարի տակից մովրովին և, մարները շփելով, հասկացրեց այս բոպերին ինչ ընթացք բռնելը* [3, 308]:

Մուրազը սրտում մնալ – Ցանկությունը, իդձը չկատարվել: *Ելնում է մեկին իր երազն ու սեր: Մյուսի մուրազը սրտումն է մնում* [11, 90]:

Глаза / зубы разгорелись – Ինչ-որ մեկը շատ է ուզում ինչ-որ բան: *Я же знаю, что у тебя на него давно глаза горят* [12, 109]. *Разве что у начальника твоего или у какого-нибудь знатного да богатого вельможи разгорятся на тебя зубы и он захочет выдать за тебя дочь* [13, 211].

Глаза бы мои не видели / глядели / смотрели – Բոլորովին չի ցանկա-
նում տեսնել: *Майке казалось – так она и засохнет за столом регистратора в
Доме моделей. Глаза бы ее на этот Дом не смотрели [12, 108] .*

Не пускать на глаза – Չցանկանալ մեկին տեսնել: *После этой истории
красавица тебя на глаза к себе не пустит [13, 134].*

Точить зуб(ы) – Ձգտել տիրանալ մեկին կամ մի բանի: *Все знали про
этот транспорт и, как говорил Денисов, точили на него зубы [14, 479].*

Не лезет в рот /в глотку / горло – Ուտելու ոչ մի ցանկություն չունենալ:
*Черный, сырой хлеб не лез в горло, сухая вобла в жиденькой кашнице развари-
валась в противную бурду [12, 120].*

Опускать / опустить руки – Մի բան անելու ցանկությունը կորցնել:
Уверяю тебя это очень важно. Такой тон, что я и руки опустил [15, 29].

Руки чешутся – Մեկը ինչ-որ բան անելու անհաղթահարելի ցանկություն
ունի: *У людей руки чешутся, а работы нет: Все бока отлежали [14, 400].*

В рот просится – Մեծ ցանկություն կա ուտելու: - *Ох, хороша селедочка,
сама в рот просится. Соус горчичный. Все как полагается [12, 501].*

Скрепя сердце – Հակառակ ցանկության, դժկամությամբ: *Скрепя сердцем
решился он переехать в Москву на дешевые хлеба [16, 42].*

Сердцу не прикажешь – Եթե ցանկություն չկա, սրտին չես հրամայի:
*Сердцу, как говорится, не прикажешь, а только – зря, - сказал Степан
Матвеевич [12, 546].*

Сердце / душа не лежит – Հակում, ցանկություն, հետաքրքրություն չկա:
*Сердце ее к нему никогда особенно не лежало, и без него, по крайней мере,
одним командиром над ней стало меньше [12, 203].*

To one's heart's content – Որքան ցանկանում է: *You can walk the streets
to your heart's content tonight [17, 197].*

One's fingers itch – Մեկը շատ է ցանկանում մի բան անել: *And each as he
passed looked at Barbara with his fingers itching to remove his hat, and a feeling
that this was She [18, 126].*

One's/the/ sb's heart isn't in sth – Մեկը մի բան անում է դժկա-մությամբ:
*And yet, though he tried very hard to convince himself, his heart was not in the
work [19, 301]:*

The flesh is weak – Հոգին ուզում է, իսկ մարմինը թույլ է: *One should not
ask for outside proof – no, reason should be enough. But the flesh is weak, it is
consolation to find that one is on the right track [18, 285].*

One ain't got the heart – Մեկը տրամադրություն, ցանկություն չունի մի բան անելու: *He's my dead sister's boy, poor thing, and I ain't got the heart to lash him, somehow* [20, 8].

A chip on one's shoulder – Կովելու ցանկություն: *Women who nag their husbands, shout at their children, don't get on with their neighbours... because they have a chip on their shoulder, are all suffering from vitamin deficiency* [18, 148].

One's / the mouth waters (at / for) – Բերնի ջրերը գնում են, փխրժակը բացվում է: *Tom's mouth watered for the apple, but he stuck to his work* [20, 65].

Be after / out for sb's blood – Արյան ծարավի լինել: *He's out for somebody's blood, if I am not mistaken yours preferably* [18, 90].

Այս իմաստային դաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ, ինչպես **մե մարդ ինչ չունենա, սրտով էն գուզի** (բրբ. ամեն մարդ ցանկանում է ունենալ իր չունեցածը), **ջան տալ** (բրբ. սաստիկ փափագել մի բան), **ատամները եռալ** (մի բան կատարելու սաստիկ փափագ գգալ), **աչքերով ուտել** (տարփական հայացքով, ցանկությամբ նայել մեկին), **աչքերով կրակե խանչալներ խաղացնել** (վավաշոտ, ցանկասեր հայացքով նայել մեկին), **руки опускаются / отнимаются** (լրիվ կորում է մի բան անելու ցանկությունը), **руки горят** (մեկն այրվում է մի բան անելու ցանկությունից), **кто старое помянет, тому глаз вон** (ասվում է, երբ չեն ուզում հիշել անցած վիրավորանքները, անփխրժությունները), **nothing is impossible to a willing heart** (ասացվ.) (ցանկության դեպքում ոչինչ անհնարին չէ), **смотреть из рук** (գործել ուրիշի ցանկությամբ):

Իմաստային այս դաշտի դարձվածքներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ իրենց ընդհանուր իմաստի հետ մեկտեղ, դրանք արտահայտում են նաև որոշ իմաստային նրբերանգներ: Օրինակ՝ հայերենի դարձվածքներում կարելի է նկատել նաև հաճույքի, հավանության, տրամադրության, ցանկության կատարման և չիրականացման, ինչպես նաև մի բան ձեռք բերելու, մեկին սիրելու ու նրա հետ ամուսնանալու, ինչպես նաև սեփականելու ցանկություն ունենալու, սակայն դրա հնարավորությունը չունենալու, վատ տրամադրության մեջ լինելու, մեկին տեսնելու ցանկություն չունենալու նրբերանգները: Ռուսերենի դարձվածքներն արտահայտում են ինչպես անհաղթահարելի ցանկության, այնպես և դրա բացակայության, մի բան դժկամությամբ անելու նրբիմաստները: Անգլերենի դարձվածքները ևս, բացի հիմնական իմաստներից, արտահայտում են նաև ցանկության կատարման և մի բան դժկամությամբ կատարելու նրբիմաստները: Նկատում ենք նաև, որ դարձվածքների իմաստային տիրույթը պարունակում է ցանկության տարբեր աստիճաններ արտահայտող նրբիմաստները:

Դարձվածքների ճնշող մեծամասնությունը մենիմաստ է, սակայն հանդիպում են նաև սակավաթիվ բազմիմաստ դարձվածքներ՝ **աչք ունենալ, բերանի ջրերը գնալ** և այլն:

Դարձվածքների գլխավոր անդամը իմաստային առումով մարմնի մաս ցույց տվող բաղադրիչն է, որը ոչ մի դեպքում օտարել չի կարելի, այլապես դարձվածքը կկորցնի իր իմաստը: Բացառություն են կազմում հայերենի «**մուրազը սրտում մնալ**» և ռուսերենի “**глаза разгорелись**” դարձվածքները, որոնցում **սիրտ** և **глаза** բաղադրիչները կարող են համապատասխանաբար փոխարինվել **փոր** և **зубы** բաղադրիչներով՝ առանց իմաստային փոփոխության:

Դարձվածքները պատկանում են իմաստակառուցվածքային տարբեր խմբերի: Դրանք գոյականական, բայական, մակբայական հաղորդակցական կառույցներ են: Երեք լեզուներում առկա են նաև ասացվածքներ: Դարձվածքներում գործում են անվանական և բայական քերականական կարգերը, որոնցից մի քանիսն ունեն իմաստազատիչ դեր, և դրանք այլ կերպ օգտագործելիս դարձվածքը կարող է զրկվել իր դարձվածային արժեքից: Կան դարձվածքներ, որոնք գործածվում են միայն ժխտականով կամ հարցականով՝ **սիրտ մնալ, աչք ունենալ, ով կուզի իր աչքը քոռ տեսնի և այլն**:

Դիտարկված դարձվածքների շարքում առկա են մի շարք բառային, քերականական, ոճական և այլ տարբերակներ, ինչպես, օրինակ՝ **սրտի իղձ / փափագ / ցանկություն, բերանի / բերնի ջուրը / ջրերը / թուրը գնալ / վազել, глаза /зубы разгорелись, не лезет в рот / глотку / горло, one’s / the/ sb’s heart isn’t in sth/ it, be after / out for sb’s blood.**

Երեք լեզուների դարձվածքների շարքում նկատվում են հոմանիշ դարձվածքներ՝ **սրտի իղձ / փափագ / ցանկություն – քիթը քամի մտնել – բերանի (բերնի) ջուրը (ջրերը) / թուրը գնալ / վազել – աչքը տնկել - աչք ունենալ – փորի ցավ, գլուխ չունենալ – երես պահել մեկից, սիրտը փորումը մեռնել – մուրազը սրտում մնալ, глаза /зубы разгорелись – точить зубы, one’s heart isn’t in sth – one ain’t got the heart.** Որոշ դարձվածքներ արտահայտում են հականշտություն իրենց արտահայտած ցանկություն ունենալու և դրա բացակայության առումով:

Դարձվածքները հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, հայերենում նաև՝ բարբառներում: Դրանցով չափազանց հարուստ է գեղարվեստական գրականությունը:

Դարձվածքների մեծ մասը հատուկ է դիտարկվող այս կամ այն լեզվին, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որոնք ունեն իրենց համարժեքները

մյուս մեկ կամ երկու լեզուներում, օրինակ՝ **ձեռքերը քոր գալ** – *руки чешутся* – **one’s fingers itch**, **սիրտ չունենալ** – *one ain’t got the heart*, **արյան գիժ** - **be after / out for sb’s blood**.

Դիտարկվող լեզուներում գոյություն ունեցող համարժեք դարձվածքների և նույնիսկ համարժեք իմաստային դաշտերի գոյությունը վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, ինչն էլ իր հերթին բացահայտում է լեզվամտածողության մեջ եղած մշակութային ընդհանրությունները: Մյուս կողմից՝ չնայած ուսումնասիրված դարձվածքների շարքում հանդիպող բազմաթիվ համարժեքների, ուսումնասիրված դարձվածքների ճնշող մեծամասնությունը հատուկ է միայն այս կամ այն լեզվին, մի հանգամանք, որ վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ազգային յուրահատկությունների մասին: Տարբերությունները պայմանավորված են մի կողմից՝ մարմնի մասերի անվանումները օգտագործելու տարբեր սովորույթամբ, լեզվական միավորների իմաստային ծավալի տարբերություններով, հոմանշային տարբերություններով, մյուս կողմից՝ արտալեզվական գործոններով: Ինչպես նշում է Ս. Գ. Տեր-Մինասովան. «Իրականության միևնույն հատվածը տարբեր լեզվական ձևավորում է ստանում տարբեր լեզուներում, քանի որ իրականության այդ հատվածն անցնում է մարդու գիտակցության միջով և արտացոլման ընթացքում ձեռք է բերում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք հատուկ են տվյալ ազգային գիտակցությանը, որն իր հերթին պայմանավորված է տվյալ ժողովրդի մշակույթով» [21, 49]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ullman St.** Semantics. Oxford, 1977 - 278 p.
2. **Вердиева З. Н.** Семантические поля в современном английском языке - М., 1986 - 120 с.
3. **Պողոջան Պ.**, Հացի խնդիր, Ե., Հայաստան հրատ., 1968 - 384 էջ:
4. **Թումանյան Հովհ.**, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., ՀԳԱ հրատ., 1994 - 504 էջ:
5. **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 1, 3,4, Ե., 1983-1984:
6. **Թորգոմյան Ծ.**, Անմար կրակներ, Ե., 1959 - 639 էջ:
7. **Սուքիասյան Ա., Գալստյան Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, ԵՊՀ, 1975 - 614 էջ:
8. **Շիրվանզադե Ա.**, Քառու, Ե., 1955 - 335 էջ:
9. **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի, Ե., 1975 - 152 էջ:
10. **Իսահակյան Ա.**, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., “Հայաստան” հրատ., 1975:
11. **Թումանյան Հովհ.**, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., ՀԳԱ հրատ., 1992:

12. **Квеселевич Д.И.** Русско-английский фразеологический словарь. -М.,1998,704 с.
13. **Гончаров И. А.** Обыкновенная история. -М.: Худ. лит., 1968. - 311 с.
14. **Молотков А.И.** Фразеологический словарь русского языка. -М., 1978. - 543 с.
15. **Достоевский Ф.М.** Бедные люди. -М., 1974. - 496 с.
16. **Тургенев И.С.** Дворянское гнездо. -М.: Гос. изд. худ. лит., 1952, - 162 с.
17. **Cronin A.J.** Hatter's Castle. - "FL. Publ. House" -М., 1963. – 668 p.
18. **Kunin A.V.** English-Russian Phraseological Dictionary. -М., Soviet Encycl., 1982. - 942 p.
19. **Cronin A.J.** The Citadel. -М., 1957. - 449 p.
20. **Twain M.** The Adventures of Tom Sawyer. - “FL Publ. House”, М., 1948. - 491 p.
21. **Тер-Минасова С. Г.** Язык и межкультурная коммуникация. -М.: Слово, 2000. - 262 с.

А.З. КАЗАРЯН

ФРАЗЕОЛОГИЗМЫ, ВЫРАЖАЮЩИЕ ЖЕЛАНИЕ И НЕЖЕЛАНИЕ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Целью статьи является изучение, анализ и сопоставление фразеологизмов, выражающих желание и нежелание в армянском, русском и английском языках. Изучение данных фразеологизмов выявляет некоторые сходства и различия между семантическими и другими особенностями фразеологических единиц указанных языков, что свидетельствует об общности и различиях, существующих в языковом мышлении народов, говорящих на этих языках.

Ключевые слова: фразеологизм, семантическое поле, сопоставление, общность, различие, языковое мышление.

H.Z. GHAZARYAN

PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING DESIRE AND UNWILLINGNESS IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The goal of this article is to study, analyze and compare the Armenian, Russian and English phraseological units, expressing desire and unwillingness. The investigation of the mentioned units reveals some similarities and differences between the semantic, as well as other characteristics of the phraseological units of the languages studied. These similarities and differences speak of the common and distinguishing features, existing in the linguistic thinking of the peoples speaking these languages.

Keywords: phraseological unit, semantic field, peculiarity, comparison, similarity, difference, linguistic thinking.